Իրատեսական (արհեստագործական-տեխնիկական) Ա

Իրատեսական տիպի մարդիկ հաճույքով են աշխատում ձեռքերով և առարկաների օգնությամբ, նրանք հետաքրքրվում են գործիքներով և սարքերով: Այս տիպը նախընտրում է մեխանիկական գործունեության տեսակները, այդ թվում՝ մեքենաների, սարքավորումների, մեխանիզմների կառավարում: Կիրառում են գործիքներ, որոնք պահանջում են ճշտություն, կոկիկություն, շարժողական համակարգի ճշգրիտ համակարգում (հաստոցներ, ատամնաբուժական սարքավորումներ, ոսկերչական գործիքներ և այլն): Շինարարական, վերանորոգման աշխատանքներ իրականացնում են առավել արդյունավետ: Նախընտրում են այնպիսի աշխատանք, որը տալիս է շոշափելի, իրական արդյունք: Գերադասում են իրագործել քան մտածել, կոնկրետ առաջադրանքներով աշխատանքները ավելի արդույնավետ են իրականացնում: Նրանք սիրում են լինել բնության մեջ:

Նախընտրելի մասնագիտություններ և զբաղմունքներ

Գյուղատնտես, ամրալարեր գործող, ավտոմեխանիկ, ավտոդետալներ պատրաստող, բետոնագործ, լանդշաֆտային դիզայներ, էկոլոգ, Ֆերմեր, ֆրեզերագործ, երկրաբան, դեռձակ, հացթուխ, ատաղձագործ, սանհանտեխնիկ, շինարար, կենդանիներ բուծող, ատամնատեխնիկ, սննդի արդյունաբերության տեխնոլոգ, խոհարար, խառատ, քարտեզագիր, ինժեներ-կոնստրուկտոր, անտառապահ, օդաչու, ոստիկան, անասնաբույժ, եռակցող, ատամնաբույժ:

Ստեղծագործական (գեղարվեստական) Բ

Այս տիպի անձինք ունեն մեծ երևակայություն, երաժշտական, դերասանական ունակություններ: Գեղագիտությունն իրենց համար կարևոր է: Այս տիպի ներկայացուցիչները իմպուլսիվ են, ունեն առաջադեմ մտածողություն, ինքնաարտահայտման ձգտում, զգացմունքային են: Նախընտրում են այնպիսի աշխատանքային միջավայրը, որը հնարավորություն կտա ինքնարտահայտվելու և սեփական գաղափարները իրացնելու: Ձանձրանում են միապաղաղությունից, որտեղ չկան ստեղծագործական և նորարարական մոտեցումներ:

Նախընտրելի մասնագիտություններ և զբաղմունքներ

Դերասան, ճարտարապետ, ապրանքագետ, դիմահարդար, դաստիարակ, հագուստի մոդելավորող, մոդել, գրաֆիկ դիզայներ, արվեստագետ, դիրիժոր, ռեժիսոր, հանրային կապերի մասնագետ, երաժիշտ, լուսանկարիչ, օպերատոր, նկարիչ-ձևավորող, մատուցող, վարսավիր, ծաղրանկարիչ, երգիչ(ուհի), դերձակ, ֆիտնեսի մարզիչ, հոգևորական, հաղորդավար, պարուսույց, գիդ, մեթոդիստ վեբ-դիզայներ, ոսկերիչ:

Հետազոտական (հետազոտող-ուսումնասիրող) Գ

Հետազոտական տիպին պատկանող անձինք հաճույքով են հավաքագրում, համակարգում, վերլուծում, հետազոտում և սովորում: Նրանք վերլուծական մտածողություն ունեն, հետաքրքրասեր են, ինտելեկտուալ: Սիրում են բարդ

խնդիրներ լուծել: Հիպոթեզների և տեսությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս նրանց իրացնելու սեփական գաղափարները: Նախընտրում են անկախ, ինքնուրույն աշխատանք, որը ենթադրում է աշխատանք սեփական ուժերով: Գիտական կամ լաբորատոր աշխատանքների իրականացում:

Նախընտրելի մասնագիտություններ և զբաղմունքներ

Ճարտարապետ, գրադարանավար, ապրանքագետ, ատամնաբույժ, էկոլոգ, տնտեսագետ, շուկայագետ, վերլուծաբան, դեղագործ, ֆիզիկ, երկրաբան, արվեստագետ, պատմաբան, հնէաբան, լրագրող, լեզվաբան, օդերևութաբան, միկրոբիոլոգ, մասնագիտական կողմնորոշման խորհրդատու, հոգեբան, մանկավարժ, բժիշկ, քիմիկ, ֆիզիկ:

Սոցիալական (դաստիարակող-խնամող) Դ

Այս տիպին պատկանող մարդիկ պատրաստակամորեն են խնամում ուրիշ մարդկանց: Նրանք դաստիարակում են, սովորեցնում, խորհուրդ տալիս, խնամում, բուժում և մտահոգվում մարդու ֆիզիկական, հոգեկան և հոգևոր առողջությամբ: Մարդասեր են, կենսուրախ, ընկերասեր, լավատես, ունեն պատասխանատվության բարձր զգացում, մարդկանց հասկանալու ունակություն:

Նախընտրում են աշխատել խմբերում՝ մարդկանց հետ, այլ ոչ թե առարկաներով և սարքավորումներով:

Նախընտրելի մասնագիտությունների և զբաղմունքներ

Բժիշկ, իրավաբան, գրադարանավար, մանկավարժ, տնտեսագետ, էքսկուրսավար, լրագրող, կառավարիչ, գիդ-թարգմանիչ, հասարակայնության հետ կապերի մասնագետ, հասարակական և մշակութային միջոցառումների կազմակերպիչ, ապահովագրական գործակալ, զինվորական, դաստիարակ, մատուցող, սոցիալական աշխատող, հոգեբան, գործավար, հոգևորական, սոցիալական մանկավարժ, ատամնաբույժ, հաղորդավար, մասնագիտական կողմնորոշման խորհրդատու, սոցիոլոգ:

Նախաձեռնող (ղեկավարող–վաճառող) Ե

Այս տիպի մարդիկ հաճույքով են տրամադրում, համոզում և առաջնորդում, նրանք ղեկավարում են և կազմակերպում: Նրանք հեշտությամբ են կառավարում միջանձնային փոխհարաբերությունները: Բնորոշ ներկայացուցիչներն ունեն կազմակերպչական ջիղ, հռետորիկայի արվեստին տիրապետելու, մարդկանց համոզելու ունակություն, շփվող են: Նախընտրում են այնպիսի աշխատանք, որտեղ կլինի թե՛ ֆինանսական, թե՛ միջանձնային ռիսկ: Սիրում են հանրային միջոցառումներ և ելույթներ:

Նախընտրելի մասնագիտություններ և զբաղմունքներ
Ձեռնարկատեր, տարբեր կազմակերպությունների առևտրային գործակալ, իրավաբան, կառավարիչ, բրենդ-մենեջեր, տնտեսագետ, ֆերմեր:

Կարգավորող (սովորական-ղեկավարող) Ձ
Այս տիպի մարդիկ հաճույքով են աշխատում գրասենյակում: Նրանց համար կարևոր են հստակ կանոնները: Աչքի են ընկնում կազմակերպվածությամբ, ճշտապահությամբ, բծախնդրությամբ, կոկիկությամբ: Ազնիվ են, պահպանողական, հարմարվող են: Սիրում են նյութական բարեկեցություն: Հիանալի կատարում են բարդ և կենտրոնացված աշխատանքներ: Սիրում են իրենք իրենց համար սահմանել հատուկ կանոնակարգ ցանկացած աշխատանքում:

Նախընտրելի մասնգիտություններ և զբաղմունքներ
Ապահովագրական գործակալ, փաստաբան, հաշվապահ, հաշվետար, բանկային համակարգի աշխատող, տնտեսագետ, համակարգչային օպերատոր, արխիվավար, գրադարանավար, նյութերի որակի վերահսկման մասնագետ,

լեզվաբան, բուժքույր, միկրոկենսաբան, ոստիկան, դատաիրավական համակարգի մասնագետ, փոստային կապի օպերատոր, դեղագործ, քիմիկ-տեխնոլոգ, քննադատ, ծրագրավորող, էլեկտրական տեխնիկայի մասնագետ, իրավաբան, զինվորական: